

12 579



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«19» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 248 - 24

Նախաձեռնող՝

«Կամ Դեվելոպմենթս» ՍՊԸ
Քաղաք Երևան, Միկոյան 18/2

Գործունեությունը՝

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակ 5/1
հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի
համալիրի կառուցում
քաղաք Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 248 - 24

« 19 » Ապրիլ 2024թ.

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակ 5/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Կամ Դեվելոպմենթս» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ներածական մաս. «Կամ Դեվելոպմենթս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվությամբ նախատեսվում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակ 5/1 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2024թ. հունվարի 24-ի N01/50-01-29-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.8083 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ: Փորձաքննական գործընթացն իրականացվել է 2014 թ. օրենքի դրույթներին համապատասխան, քանի որ համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելն այդ պահին մուտք եղած գործունեությունների համար շարունակում են գործել 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ տարածքը գտնվում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ Պարույր Սևակ փողոց 5/1 հասցեում և իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է քանաքեռի հրաբխային բարձրավանդակի հարավային եզրամասում, որը քաղաքաշինական կառուցապատման հետևանքով ենթարկվել է փոփոխությունների: Տարածքի հողակազմը ներկայացնում է մեղմ թեքությամբ դեյուվիալ լանջի մի հատված՝ հյուսիսից դեպի հարավ



անկումով, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1235-1236 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի ապարներ, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձանները, ջրային ռեսուրսները բացակայում են:

Նախատեսվող կառույցի հարևանությամբ գտնվում են հասարակական և բնակելի կառույցներ: Բնակելի կառույցներից ամենամոտը գտնվում է մոտ 24 մ հեռավորության վրա, Կենդանաբանության ինստիտուտը՝ մոտ 35 մ, իսկ Պարույր Սևակ փողոցը՝ 1-23.5 մ հեռավորության վրա:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ հողատարածքը ծանրաբեռնված էր քանդման ենթակա 6832.2 քմ մակերեսով հասարակական շենքով: Շենքն իրենից ներկայացնում էր կիսանկուղային հարկով 11 հարկանի ե/բ սյունհեծանային հիմնակմախքով և ե/բ մոնոլիթ սալերից միջհարկային ծածկերով շինություն, որի արտաքին պատերն ինքնակրող կոնստրուկցիաներով էին և իրականացված էին սրբատաշ տուֆ քարերի շարից:

Համաձայն հաշվետվության շենքն ապամոնտաժվել է հայցվող տարածքն ամբողջովին մաքրվել է շինարարական աղբից, 2400 մ³ ծավալով շինաղբն օրենքով սահմանված կարգով տեղափոխվել է աղբավայր, ինչի մասին հիմնավորումը ներկայացված է հաշվետվությունում:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես - 8083.0 մ²,
- կառուցապատման մակերես 0.00 նիշում – 3189.4 մ²/ (39.5%),
- սալվածքներ և ճանապարհներ – 1619.98 մ²/ (20.0%),
- կանաչապատման մակերես – 3273.62 մ²/ (40.5%),
- ավտոկայանատեղիների քանակը - 371 հատ (74.0%):

Նախագծված բազմաբնակարան բնակելի համալիրը, համաձայն ՇՄԱԳ հաշվետվության, բաղկացած է 3 մասնաշենքից՝ А, В, С:

Բոլոր մասնաշենքերը բաղկացած են վերգետնյա 15 հարկից (0.00-ից +46.50 նիշերում): Ռելիեֆի առանձնահատկությունների ելնելով -9.00 և -4.50 նիշերը համարվում են կիսանկուղային հարկեր, իսկ -23.40-ից -13.50 նիշերը՝ նկուղային:

Համալիրի վերգետնյա 14 հարկերը (+3.60-ից +46.50 նիշերում) բնակելի են: Բնակարանների ընդհանուր քանակը 504 է՝ համապատասխանաբար 196, 168 և 140 բնակարան А, В և С մասնաշենքերում:

Ռելիեֆի առանձնահատկություններից ելնելով՝ մասնաշենքերի ստորգետնյա և վերգետնյա հարկերը տարբերվում են:

- 9.00-ից 0.00 նիշերում հարկերը հասարակական նշանակության են: Պարույր Սևակ փողոցի կողմից՝ -9.00 նիշում իրականացվելու է շենքի գլխավոր մուտքը:

Նկուղային հարկերն ապահովված են օդափոխության և լուսավորության համակարգերով և անհրաժեշտության դեպքում կարող են բնակիչների համար ծառայել որպես թաքստոց:

- 13.50 նիշում հարկի կեսը նախատեսված է որպես հասարակական տարածք, մյուս կեսը որպես հասարակական օգտագործման ավտոկայանատեղ:

- 23.40-ից-16.80 նիշերում գտնվում է եռահարկ ստորգետնյա ավտոկայանատեղի: Կայանատեղիների ընդհանուր քանակը 371 է, ինչն ապահովում է բնակարանների 73.6%-ի սեզասարկումը Այս նիշերում են նաև տեղակայված շենքի ինժեներատեխնիկական սեզասարկումը:



ապահովող սենքեր: Ավտոկայանատեղ մուտքն իրականացվելու է Պ. Սևակ փողոցից՝ -16.80 նիշում:

Տարածքում ճանապարհները և սալվածքները նախատեսվում է իրականացնել բազալտե չորսվակասալերի /брусчатка/ և անցքերով մայթային սալերի /անցքերում խոտածածկ/ տեսքով: Համալիրի հետին ճակատի հատվածում նախատեսված է խաղահրապարակ:

Կառույցի էլեկտրամատակարարումն իրականացվելու է ըստ «ՀԷՏ» ՓԲԸ կողմից տրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի:

Գազամատակարարումը կիրակիանացվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ տեխնիկական պայմանների համաձայն:

Շահագործման ընթացքում բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 72 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Շիրանարարության ժամանակ Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 9662.25 մ³/շին.ժամ: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (65 մարդ), ինչը կազմում է 2991.45 մ³/շին. ժամ. կամ 1.6 մ³/օր: 1500 մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 4050 մ³/շին. ժամ. կամ 4.5 մ³/օր: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան, որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր երկու սանհանգույց, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոկռունկ, բետոնատար ինքնաթափ, եռակցման սարք, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր և այլն:

Կառուցապատման աշխատանքների նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 115200 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 9386 մ³ հետլիցք: Ավելցուկային 105814 մ³ ծավալով հողային զանգվածը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային աղբ (0.7 տ/տարի) և շինարարական աղբ (480 մ³): Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող 105814 մ³ ծավալով: Շինարարական աղբը և հողն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական



ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ մոտակա աղբավայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն: Հրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 3273.62 մ²: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 1000 մ³ բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Հողատարածքի վրա տեղ-տեղ հանդիպում է թփային բուսականություն: Տարածքում առկա են 8 հատ ծառ, որոնք նախատեսվում է հատել:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց, որտեղ լինելու են կաթիլային ոռոգման հանգույցներ և ռետինե խողովակներ՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կառուցապատման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ շենքերի հիմքերի քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների բեռնման և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, թափոնների կառավարմանը, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի կատարում՝ օրական 2-3 անգամ,

- աղմկահարույց աշխատանքների իրականացում հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,

- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,

- մեքենաների և տեխնիկայի լվացում շինհրապարակից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

- քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատումը շինհրապարակում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,

- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ:



- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար՝ ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվել է 2380000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակ 5/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննության գործընթացն իրականացվել է Օրենքի պահանջների համապատասխան:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում նախատեսվող գործունեության վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ:

Հանրային լսումների ժամանակ նախաձեռնողի կողմից ներկայացվել է, որ տարածքում առկա քանդման ենթակա 6832.2 քմ մակերեսով հասարակական շենքը, հաշվետվության նախնական տարբերակում նախատեսվում էր ապամոնտաժել պայթեցման եղանակով, սակայն, քանի որ առկա է եղել բնակչության անհամաձայնություն պայթեցման աշխատանքների վերաբերյալ, որոշվել էր շենքի ապամոնտաժումն իրականացնել քանդման նախագծի համաձայն՝ բացառելով պայթեցման աշխատանքները: Փորձաքննության գործընթացում գտնվող ՇՄԱԳ հաշվետվության «Քանդման աշխատանքներ, Անվտանգության կանոններ» բաժնում ներկայացված են եղել քանդման աշխատանքները՝ քանդման ծավալները, շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները մեղմող միջոցառումները: Սակայն, նախքան նախատեսվող գործունեության վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացություն ստանալը՝ 2024թ. սեպտեմբերի 11-ին, ընկերության կողմից իրականացվել են գոյություն ունեցող շենքի ապամոնտաժման, քանդման աշխատանքներ: Լիազոր մարմնի կողմից պահանջվել է նախաձեռնողից ներկայացնել պարզաբանում՝ քանդման աշխատանքների հրատապության և քանդման եղանակի վերաբերյալ: Նախաձեռնողի կողմից ներկայացվել է «ՍԵՅՍՄԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունն՝ առ այն, որ «Կառույցի կրող կոնստրուկցիաները և նրանց միացման հանգույցները գտնվում էին անբավարար տեխնիկական վիճակում: Առկա էին ծածկերի առանձին էլեմենտների տեղափոխություններ, մինչև 1 մմ լայնությամբ ճաքեր բետոնում, սյուների բետոնի քայքայում, ամրանների մերկացում, սյուների երկայնական ամրանի կքումներ: Շենքի վնասվածության աստիճանն, ըստ ՀՀՇՆ 20.04-2020-ի աղյուսակ 24-ի, գնահատվել է 4-րդ կարգի:»: Այդ իսկ պատճառով, համաձայն ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակում ներկայացված պարզաբանման, շենքի քանդման աշխատանքներն իրականացվել են նախատեսվածից ավելի շուտ:



Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով» Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ-ում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով պատճառաբանական մասը՝ «Կամ Դեվելոփմենթս» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակ 5/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան